

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիտ համար	12 ֆր.
արտերկրյան	7 "
Վեցամսյան Արսասահմանի	15 ֆր.
համար արտերկրյան	8 "
Վեցամսյան Ավերիկայի	3 ֆր.
համար արտերկրյան	1.50 "

Իրականացված են արդյունքները և արտերկրյան համար 40 սանթիմիտ իսկ վերջին արտերկրյան համար 20 սանթիմիտ է. երեկին և երեկ անգամներու համար 20 0/0 զեղչ կր. լայ:

Վառահայի համար ձեռք 40 սանթիմիտ է

ՇԱԲԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԻՒ ՇՄԱՅԹ՝ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Նամակ և պարտքերի համարները

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիտի համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և չեմ տրուի

ՎՃԱՐԺՈՒՄԻ ՔԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃՆԵԳԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆԿԻՆ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ 2, 3.

ԴՆՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՂ»

Արդէն այս անունով բը բոշիւրը յանձնված է սպագրութեան:

Բոշիւրի նպատակն է, առանց խժժանքի Դանակցութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց: Ինչպէս է որ բոշիւրի մէջ փաստող զօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու. իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարժում» Սմարտութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ ք. ֆէն կը գրտնուի Վիեննա քաղաքի քաղաքային վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Սա հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Աստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԻՆՉՈՒ ԴՈՆԱՓԱԿ

Վառնայում հաւաքված հայ ուսուցչական համագումարումը որոշում ունի և զոնափակ նիստեր ունենալ: Ընդհանրապէս մենք զարմանում ենք որ մի նոր կազմակերպվող ուսուցչական միութիւն իր առաջին համագումարում կայող է և զոնափակ նիստեր ունենալ. բայց առելի պարմացրեց երբ յարգելի ուսուցիչները տրամադրութիւն յայտնեցին իրենց բանալիք գիրքը գէպի մասնաւոր վարժարանն:

բը զոնափակ ժողովում վիճարանութեան նիւթ դարձնել, այսինքն բուլգարահայ գաղութի համար մի շատ կարեւոր խնդրի մասին իրենց հաւաքական կարծիքը տանց տանու յայտնել. բարեբախտաբար ուսուցիչների մեծամասնութիւնը ընդունակութիւնը ունեցաւ այդ սխալ քայլի անհիմնութիւնը ըմբռնել և բեկանելով զոնափակի քեզարկված որոշումը բաց վիճարանութեան որոշում տալ իմ, իբրեւ մասու լի ներկայացուցիչ. առաջարկութեան և բացատրութեան հիման վրա...:

Բուլգարիոյ հայ ուսուցիչների ժողովը յեղափոխական կուսակցութիւն չէ հիմնում և նա ոչ մի գաղտնիք կարող է ունենալ մասու լի ներկայացուցիչներից... ամեն խնդիր սկզբունքի տեսակէտից չի բացարձակ, պէտք է վիճարանութեան գրվեն նոյնպէս մասու լի ներկայացուցիչների ներկայութեանը որպէսզի մասու լի կարենայ որոշ կարծիքներ յայտնել որոշումների օգտակարութեան կամ վնասակարութեան մասին... Օրինակի համար կարծվում է որ ցենզի և պայքարի միջոցների մասին գաղտնի պէտք է վիճել... Ինչո՞ւ չենք հասկանում... Առանց ցենզի ուսուցիչները շատ են դրա համար... բայց այդ ոչ մի նշանակութիւն չունի... Միութեան նպատակը չը պէտք է լինի այսօրվանից առանց ցենզի ուսուցիչներին գուրս անել իր միջից... այլ միջոցներ ձեռք առնել որ այսուհետեւ անցնել ուսուցիչներ չը կարողանան վրթական ասպարէզը մտնել: Այսպէս են վարվում պետութիւնները որ և է պաշտօնէութեան ցենզի մասին օրէնք քեզարկած պարագային. ի հարկէ մենք կը ցանկայինք որ հէնց այժմ մասու լի և բարոյական ցենզի զուրկ ուսուցիչներ չը լինէին մեր գաղտնիքում. բայց այդ անկարելի է ցենզաւորների սակաւութեան պատճառով: Ասուցչական համագումարը

իր պայքարի միջոցներն էլ գաղտնի որոշելու պէտքը չունի. որովհետեւ նրա պայքարը դաւադրական չը պէտք է լինի. որպէսզի վախ ունենայ թէ միջոցները պարզվելով իր պայքարը կարող է վիճի... և պէտք է պայքարէ ուսուցչական միութիւնների յայտնի և արդէն գործածված միջոցներով, որո՞ք յայտնի են և ամբողջ աշխարհին... ուրեմն գաղտնիք պահելու խնդիր չը կայ...:

Ասուցչական միութիւնը դեռ կազմակերպվում է. նա պէտք ունի հասարակութեան համակրութեան. և այդ պատճառաւ էլ նա էր նպատակները. և դրանց իրականացնելու միջոցները պէտք է մէջտեղ գնէ... կազմակերպելուց յետոյ է որ նա կուսակցութեան իր գաղտնիքները, որոնք պէտք է վերաբերվեն երկսեռ ուսուցիչների ներքին կեանքին, պրոֆեսորներ կերպարանք կուսակցութեան և Սեկրէ Պրոֆեսուրի սկզբունքի հիման վրա պէտք է գաղտնիք մնան: Ասուցչ. միութիւն կազմակերպելու համար հաւաքված համագումարը սկզբունքի տեսակէտից վերցրած իր նպատակի և նպատակին հանելու միջոցների համար գաղտնիք չը պէտք է ունենայ մասու լից. որպէսզի մասու լի կարենայ որոշ կարծիքներ յայտնել և համագումարի որոշումները, մասնաւոր հանրութեան և կրթութեան գործի համար կարեւոր որոշումները, իր բացատրութիւններով գնէ հասարակութեան գաղտնիքի առջեւ որպէսզի հասարակութիւնը կարենայ իր բանալիք գիրքը որոշել հանգէպ ուսուցչական միութեան...:

ՊՈՒԿԱՐԻՈՑ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

«Շարժում» վերջին թիւին մէջ Համագումարին Ա. նիստին

վրայ տեղեկութիւններ տուած ըլլալով, այժմ կանցնինք այն շորս նիստերուն որոնք մընչեւ ցարդ տեղի ունեցան կանոնաւորապէս՝ ուսուցիչներու մեծ մասին ներկայութեամբ:

Առանց պիտի կարգաց Ռուս. ճուքի ուսուցչական մարմնոյն կողմէ պատրաստուած կանոնագիրը՝ որ յոգուած առ յոգուած վիճարանութեան գրուելով շորս նիստերուն մէջ՝ քանի մը փոփոխութիւններով ընդունուեցաւ:

Ըստ կանոնագրին, պուլկարահայ ուսուցչական միութեան նըպատակն է—կրթական գործը ամուր հիմերու վրայ գնել, ուսուցչին՝ իբրեւ հանրային գործիչ՝ շահերը պաշտպանել և մտաւորական մակարդակը բարձրացնել:

Ասուցչական միութեան կանգամակցին այն ուսուցիչները և ուսուցչուհիները՝ որոնք իրենց ամսաթոշակին 0/10 ին 2ը կը յատկացնեն կազմակերպութեան գանձին:

Ուսուցչական Միութեան դործերը վարելու և կանոնագրին անթերի գործադրութեան հըսկելու համար, 5 հոգիէ բաղկացած գործադիր մարմին մը կը ընտրուի. որուն մեծամասնութիւնը կը մնայ մէկ քաղաքի մէջ:

Յստաչիկայ տարեշրջանին, Ասուցչական Միութեան պիւտճէն հետեւեալն է.

Մ ու տ ք՝ 1250 ֆրանք, որուն 450ը՝ անդամավճարներէ, իսկ 800ը՝ վիճակահանութենէ կամ ներկայացումէ:

Ե լ ք՝ 1200 ֆրանք, որուն 250ը՝ դիւանի և թուղթի թերթերու ծախքերուն համար, 150ը՝ գործադիր մարմնոյ տեղափոխութեան համար, 400ը ուսուցիչներու շահերուն պաշտպանութեան համար, և 400ը՝ Պատգամաւորական ժողովի ծախքերուն համար:

Գործադիր մարմինը, Ասուցչական Միութեան հաւանութեամբ, պիտի կրնայ բացառիկ

Ժողովրդի ընկեր

Աստուցական Միութիւնը պիտի ունենայ իր պաշտօնական թերթը՝ «Ռ Ա Ղ Վ Ի Ր Ա Յ» անունով՝ որ ամենալայն բաժին մը պիտի յատկացնէ մանկավարժական հարցերու մշակման համար և որ ամէն կերպով պիտի պաշտպանէ Աստուցական Միութեան իրաւունքները:

«Ռ ա հ Վ ի Ր ա յ» պիտի ըլլայ մի ամսեայ, 4 թղթէ բաղկացեալ, «Դրօշակ» կամ «Հնչակի» ծաւալով:

«Ռ ա հ Վ ի Ր ա յ» խմբագրական մարմինը կը կազմեն Յ ու ս ո ս յ շ ն եր, որոնց մեծամասնութիւնը պիտի գտնուի մէկ քաղաքի մէջ՝ Համագումարը, յառաջիկայ նիստին մէջ, պիտի զբաղի կըրթական հարցով:

ԿՌԱՆ

27 Յուլիս 1906
Վ ա ո ն ա

ՆԱՄԱԿ ԼՈՆՏՈՆԷՆ

30 Յուլիս

ՄԻՋՆԱԲԱՐԱՄԵՆԻՍԿԱԿԱՆ ՔՕՆ. ՖԵՐԱՆՍԸ.—ԱՆԳԼԻՍԿԱՆ ՆԱ. ԽԱՐԱՐԱՊԵՏՈՒՆ ԺԱՌԸ.—ՏՈՒՄԼԵՆ ՍԵՌԱՄ Է.—ԿԵՑՑԷ՝ ՏՈՒՄԱՆ:

Երկու մեծ ու նշանակելի դէպքեր եկան ու իրար խաչաձեւեցին անցեալ շաբթու. Աստուցական մէկը՝ Տումայի լուծումն էր նիքոլայ ցարին մէկ ապուշ քահանայի դոյզանով: Երկրորդը՝ Լոնտոն տեղի ունեցող Միջնա-Բարլա մէջ թափան Միութեան 14րդ. Գ. ֆ. Ֆլրանսը:

Մ. Յ Ո Ղ Ա Կ

Ա Ր Յ Ո Ւ Ն Ք Ո Տ Պ Ա Տ Ա Ի Ն Ե Ր

Պ Ա Տ Ր Ա Ն Ք Ը

(Բարիգահայ կեանքէ)

Բոլոր մարդոց գէժերը ճշմարիտ են, ինչ ալ իրենց ձեռքերն ըլլան. Այլ չկայ երբէք ճշմարիտ կին մը՝ ճշմարիտ գէժով:

7.

Աստուց կը յաջորդէ գոնֆէթի յիմար պայքարը. — ոգեւորութեան բարձրակէտը, ուր գոյզգոյն թղթերը գետին կը լեցնեն, անցող դարձողները կողողեն, ասանց տարիքի, սեռի կամ դասակարգի բնութեան, Միեւնոյն բաղդին կեն թարկուին պատաստուեն գրգռակներով թափառական դատարկապորտը, ինչպէս եւ մետաքսապատ պերճ ըզգետներով տիկիներն ու օրիորդները, եթէ հանդիպելու ըլլան փողոցը:

Լատինական թաղի սիրտը, պուր-

Վերջինս, որ գոյացած է ասկէ բաւական տարիներ առաջ Մ. Կ. Ռ. Քրէմլըի (Բ Անգամ Անգլիացի) շահածեանութեամբ. իրեն նպատակ ունի առիթը ներկայացած պարագային հարցապնդումի նիւթ ընել պատերազմէ խուսափելու եղանակները և յառաջ բերել միջազգային ընդհանուր անդորրութիւն մը:

Իր նախնական գումարումները ան զի ունեցած են այլեւս անկիւններ, ինչպէս Հոմ. Պլոն, Լա Հէ Պրիքսէլ (Յ անգամ) Պուտոփէչչո, Բարիգ. Քրիստիանիա Վ. Էննա և Սէյնդ-Լուիզ (Ամերիկա), և կարծես բոլորին մէկ անբացատրելի բերուածիւն էր որ ներկան գումարուէր Լոնտոն, որ սահմանուած է եղիւր ըլլալու ամենէ պատմականներէն մէկը:

Ներկայ էին գրեթէ 500 և կուր-ներ, որոնք կը ներկայացնէին մօտ քսանեկերկու Բարլա մէջ, ի թիւս որոնց և Ռուսաստանը՝ իր նորածին Տումայով:

Բացման օրն էր Յուլիս 23 րշ. առաւօտ, և այդ նոյն առաւօտ ալ հեռագրիները գուժեցին Տումայի մասը:

Այս դէպքը ցնցեց Անգլիական հասարակութիւնը և առիթ տուաւ համակրական այն անկեղծ արտայայտութեան որն անկող կը համարուէր անգլիական պաշտպաններուն մէջ Սյոք բովանդակ 500 եկուորներուն մէջ Տումայի 6 պատերազմները օրուան ներսուս ու յարգանքի առարկան պիտի ըլլային:

Նոր հաստատուած Բոմբիւն մը՝ որուն անդամակցած են անգլիական ազատ ու յառաջադէմ մամուլին է՛ն ակնառու խմբագիրներն ու գրողները, ինչպէս և անթիւ ուրիշներ՝ հանրաժանօթ իրենց սեպհակաս շրջանին մէջ, պատրաստած էին ճաշկերպի սը առանձնապէս ի պատիւ Տումայի անդամներուն:

Սակայն, զժնդակութիւնը ճակատագրին, կրտսն Սնգլիացիք եւ, ո՛վ կրնայ գուշակել, իրերու այս

դրութիւնը թերիս առաւել նպաստաւոր դառնայ անոնց՝ որոնց էակտն է:

Բոլորին շրթներէն զգուանքի բառ մը միայն ժայթքեց անխտիր. — զրգուանք բնորոշ մարտի մարտի մը, զգուանք ընդդէմ կեղծաորութիւնն որ՝ արասունքեան դիմակին տակ՝ ամենէ վայրագ բռնութիւնները ի գործ կը դնէ:

Ինտրիկէ, լուրը ո եւ է կիրպով շար. գիլեց Բոմբիւնի բացումը Երկու շաբթի, առաւօտեան ժամը 11ին, եկուորները ներկայ էին Ռէսթմի նիւթի պատասին հոյակապ սրահներէն մէկուն ուղ որու բացման ճառը պիտի խօսէր Անգլիոյ նախարարապետ Մրր Հէյրի: Բէյրի-Պէյրի մէջ կացութիւնը փափուկ էր Մրր Հէյրի պարտաւորուած էր իր ճառին մէջ յիշել անպայման Տումայի պատահարը և այնպիսի եղանակով՝ որ, արժան ըլլալով հանդերձ Անգլիոյ ազատական Բարլամէնթի մը ներկայացուցչին՝ նոր ու անհանդի հետեւանք ներու ալ տեղի չը տար:

Եւ երբ, իր սովորական պատկանելի ու խրոխտ կերպորտը քով բայձ բացաւ բեմ, հոն բազմաթիւ միջազգային զեմքերու լայն հոտանքին վրայ կարելի էր նշարել անձանթ հասանալանութիւն երեքով յդի երեւոյթ մը: Բոլորն ալ գիտին թէ բոլորն ինչ գիտաւոր ու պատմական է բայց թէ ինչո՞վ — մէկուն մտքէն խնչէր անցնէր:

Եւ ահա, նախագահին, Լորտ Ռ. իր-տէյլի, մէկ հակիրճ յառաջարանէն յետոյ՝ Մրր Հէյրի կը բարձրանայ բեմ և կակտ իր ճառը անթերի փըրաններէնով մը:

Ձայնին մէջ երբուժ չկայ կամ արտայայտութեան մէջ տարօրինակ յոգում: Սովորական խրատ լեզուն է միեւնոյն խրոխտ պատկերը:

Կը շնորհաւորէ ներկայները. ն Վեհափառութեան (Էտուարտ Է. Ի) խրատկցութիւնն ու համակրութիւնը

այսպէսուած, կերթայ, կը սլանայ, եւ իր մոխրին ատելութեան բովանդակ մաղձը կը տանի կը թափէ գգրախտ խրճիթներու խարխուլ տանիքներէն ներս, կը սուրայ, կը բաղիւն կիսափուր շնքերու, քանդուած դռներու, կիսակոտոր պատերու եւ կիսափշուր պատուհաններու:

Բարեկենդան է... պարանոցը, քաղէ, թատրոն ու նուագահանգէս լիցուած են, ու դիմակաւորուած ու անդիմակ Բարիգի հաւասար խելայնգութեամբ մը կը հրճուին, կը ցնծան, կը վայելեն...

Գոնֆէթին ալ ու ձախ կը սրսկուի կատաղի ու յիմարական թափով մը:

Բամին կը փչէ կը սուլէ... Թող փչէ, թող սուլէ. խայտանքով յերմ հոգիները մարմնոյ պազուէրը շնք զգար երթէր:

Լատինական թաղի յետնկաժ արտնետի մը մէջ, շարդիգիտն, հոգեւորք շնք մը հինգերորդ յարկին վրայ կը գտնուի խցիկ մը, Հազիւ քանի մը տասնեակ քառակուսի սոթք ընդարձակութեամբ պահարան մըն է այն: Պատերու մերկութիւնը ծածկողը՝ անյիշելի ժամանակին բարբար ձեռքով մը փակցուած թուղթերն են, որոնք տարիներու երկարատեւ շաբթի թաղին ու շորին, անձրեւին ու արեւին, հովին ու փո-

կը յայտնէ Բոմբիւնի հիւրերուն եւ ապա կը խօսի՝ տիեզերական խաղաղութեան վրայ:

Ճառը անընդհատ կը ղողմիջուի ոգեւորուած ծափերով, Կոչ կընէ ներկաներուն ո եւ է ճիգ չը խնայել՝ ստիպելու իրենց առանձին կողմաբութիւնները՝ նուագեցնել նաւային կամ ցաւաքային ոյժերը, նուազ գումարներ ծախսել պատեր, զմեք ու կոխներ յառաջացնելու հոգով, խոյս տայ պատեալով, վերջ դնել մրցումի աղետարեր սիստէմին ծովային կամ ցաւաքային տեսակետով, եւ այլն, եւ այլն:

Վերջապէս ճառ մը՝ որուն նմանը երկար տարիներէ ի վեր յուսած չէր ո եւ է պաշտօնական լեզուէ, այն ալ նախարարապետէ մը՝ Անգլիոյ նման մեծագոյն եւ հզօրագոյն Բարլամէնթի մը:

Կը թիւագրէ Բոմբիւնի անգամներուն ստիպել իրենց երկիրները՝ որ յաջորդ Լահէյի ժողովին հարեղածին շափ ջանք թափեն ընդհ. խաղաղութեան միջոցները քննելու եւ զոհարարել վախճանի մը յանգելու:

Բայց զեռ միշտեւ հոս ձայն չկար Տումայի մասին, սպասուածը այդ էր. Թանկարձ կը դառնայ Մրր Հէյրի Տումայի 6 անդամներուն՝ որոնք, խորհրդաւոր երեւոյթով մը, բառ սո բառ կը հետեւին ճառին, բոլոր հայեարեքները կուզողուին հոն:

«Ձամ կրնար զօգել ինքզինքս յայտնել յմ մասին եւ տարակոյս չունիմ այս մեծ ու պատմական գումարուսի իր քաջանչիւրին կողմէ, որքաւ ուրախ ենք տեսնել այսօր մեր մէջ ներկայացուցիչները ամենէ երիտասարդ Բարլամէնթին Ռուսական Տումային...»

Ու անդալատ ծափահարութիւն մըն է որ կակտի. Վեց անդամները կը նեն ոտքի եւս զլիւի խոսարհուժով շնորհակալութիւն կը յայտնեն:

Մրր Հէյրի կը շարունակէ. «Ս եւ է գիտողութիւն շեմ ընեն

չիին տակ անեղիւր քաղաքակերպ ու բազմագունի երեւոյթներ հիմա ալ կրպառնան թափիլ ու սնեակը տրչաւել: Հոս ու հոն, փոշիով ու ճանձերու ծիլուկներով խայտաբղէտուած շրջանակներու մէջ կը տեսնուին նկարներ. — մշտադուարթ արթիւղը ու իր հաճոյակատար տարփուհին յիշեցնող, որոնք, ո՛վ գիտէ, որ մոռցուած անցեալին մէջ ոգեւորած էին այս վշտաշուկ մերկ խցիկը:

Ուսցին լէջ սեղը կայ փոքրիկ յոռոտանի մը, վրան քանի մը հատոր գրքերով ու թղթերով խոտնիխուռն. ատոր շուրջը երկու հիւանդ աթոռներ, որոնցմէ մէկը ատենօք բազալթոսի գեր է ունեցած, այլ հիմա, իր մաշուած արտաքինով եւ կիսակոտոր ոտքերով, հազիւ ո եւ է պատուսի յարմար: Ոչ վառարան կայ եւ ոչ ալ վառարանի տեղ, Անկիւն մը կը պլպլայ սրիթի կանթիկը՝ վրան աման մը ջուրով, իսկ ատոր կից կը գտնուի փոքրիկ քաղցրիկ մահճակալ մը, որ խուցին մէկ մասը իրեն է գրաւած:

Մոմ մը, իր հոգեառ ցոլքերով կը պլպլայ քառատանիին վրայ եւ իր տոգոյն, զեղնած լոյսը, սփռելով շուրջը՝ կը պարզէ մահճակալին վրայ տարածուող երիտասարդ մը գէժքը: Աչքերը բաց անորոշ ու աննպաս-

մեզ այս առաջ հասնող լուրին նը- կատմամբ. Ոյս ո՛չ տեղն է եւ ոչ այ րոպէն ատոր համար. Բաւականաչափ ծանօթ չենք տակաւին իրողութեանց արդարացնելու կամ քննադատելու զայն .

«Բայց, սա միայն կրնանք ըսել. մենք որ մեր վստահութիւնն ու յոյ- սը գրած ենք բարիամէնթական սիւ- տէմին վրայ. նոր հիմնարկութիւններ ունեցած են յաճախ. եթէ ոչ փոթոր- կայո՞ղ զէ՞թ խոզվեալ երիտասար- դութիւն մը. Տու՛ման պիտի վերա- կենդանանայ այս կամ այն կերպով . Ամենայն անկեղծութեամբ կրնանք ըսել. — Տ ու լ մ ա ն մ ե ո ա ծ է — կ ե ց ց է՝ Տ ու լ մ ա ն . . . »

Նախարարպետի նման մէկու մը այսպիսի խօսքը. ասանկ փափուկ պարագայի մը տակ, շատ երկար ժամանակ անմոռաց պիտի մնայ .

(«Տու՛մա է մորդ, վի՛վ լը Տու՛մա!») Ահա պատմական խօսքը որ դուրս գալով որոշ հոգեբանական րոպէի մը դարձուց Սըր Հէնրի Գէմպլի Պէնըր- մէն օրուան միջոցային հերոսը . Ամբողջ շարքով եւրոպական—Անգլիականին խօսքը չեմ ընեմ այլեւս— մամուլին հրատապ նիւթը այդ էր . Ո՛չ մէկը կանկալէր այս եւ նոյն այդ պարագան էր որ դարձուց նշա- նակելի ու եզրական .

Այնուհետեւ Տու՛մայի սնգամներէն մէկը յուզուած կը բարձրանայ բեմ եւ յայտնելով իր ու իր պաշտօնա- կիցներուն անսահման երախտագի- տութիւնը՝ կը ծանուցանէ իրենց հեռացումը զկալի պարտականութեան դաշտը, ուր կուպանին իրենց եւ ուր պարտաւոր են ըլլալ : Առաջարկ, խնդրանք եւայլն՝ մնալու, անընդու- նելի էլ չըլլան այնպիսիներ որոնց աչքերը կանացի աչքերու նման կար- ջընքոտին այս սրտոյնով պատկերին առաջ . Բայց, ելք չկայ :

Յիշելու Գոնֆերանսը սեւեց ծեփ օր եւս ու զանազան պատգամաւորներ խօսեցան ու վճեցան .

տակ հայեացքը առաստաղին յառած անշարժ պառկած է ան : Տխուր է ու կը խոկա՞յ . . .

Հակառակ վրան դիզած հանգրծ- ներուն եւ նիհար վերմակին, երբեմն զող մը, անցնելով վրայէն, ամբողջ մարմինը կը թօթուէ ու կը սարսէ .

Սենեկին բարձրութեան պատճա- րաւ, հովը անոնիօրէն կը փչէ հոս, ու պատուհանին խախտել փեղկերը միաձայն ապակիներու ճոխնչին, անհեթեթ ու անսիրտ ազուկ մը կը հանեն : Կը մտնէ քամին ծերպե- րէն ներս, կը խաղայ թուղթերուն հետ, կոյտէ կանթեղին լոյսը կը յոխորտայ մոռի թեւահար ցոլքին, կը սուլէ ու կանհետանայ, ետին ձգելով մահասարսուռ պաղու թիւն մը

Չորը ետալ սկսաւ . ֆլիքոցը ար թնցուց երիտասարդը իր միապաղաղ խոյանքէն :

Չգո՞չ, չափազանց զգո՞չ շար- ժու մեկուսի փորձեց նստիլ անկողնին վրայ, սակայն մէկէն, թռքերը պատտող հազ մը ապերասան գա- զանի մը նման դուրս խուժեց նիհար կողորդէն . — Ի՞նչ, սարսափելի հազ մը որ ծակ սեռաղի նման կը նշչէր ցուրտ սենեկին մէջ :

— Օ՛ֆ . . . օ՛ֆ . . . օ՛ֆ . . . կը կազ կանձէր ամէն մէկ ժայթքումին հետ, ձախ ձեռքը ծոծրակին զրած ու ա- ջով կուրծքը շփելով, կարծես ներ-

Պէլճիգայի պատգամաւորն ըլն մէ- կը շեշտած է Հայ ու Մակեդոնական հարցերը անպայման յաջորդ խաղս- ղութեան համաժողովին առջեւ հա- նելու եւ լուծելու անհրաժեշտութեան վրայ եւ ընդունուած միահամուռ Տեսնենք ասոր արդիւնքը ինչի պիտի յանգի :

Որպէս յաւելումն կարելի է յիշել որ Անգլիական Խորհրդակցութիւնը նոր փոթորիկներու կը դիմէ :

Բանակը 20000 Նուսգեցնելու ձը- րագրէն վերջ, դեռ անցեալ օր Սըր Հէնրի Գէմպլի—Պէնըրմէն յառաջ բե- րաւ նաւային ծախսը 2 եւ կէս միլիոն ոսկիով պակասեցնելու խնդիրը յա- ջորդ տարուան համայ, ինչ որ պաշ- պանողականներուն մարզերը կը փշա- քազէ Բանուորական դասը կառա- վարութեան կողմէ քայց դու որոշ չէ վարձանը :

Մ. ՅՈՒԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՇՈՒՆ. (Ամերիկա) 23 յուլիս 1906

Կը ցուրիմ որ ճիշտ ժամանակին չը կրցի գրել այն խանդավառ եւ ե- ուանդուն գործունէութեան մասին որ ասկէ մէկ քանի ամիս առաջ սկսաւ Ամերիկահայութեան մէջ հանդէպ մեր կողմաստանայ եղբայրներու . Ամերի- կայի բոլոր գաղութներն ալ հոնգա- նակութիւններ կատարեցին ու կը կատարեն այժմայի նպատակով կա- սի Ուրախ եմ հաղորդելու որ այս խնդրին հանդէպ ոչ մէկ սպեղ երե- լոյթ անդի չունեցաւ, կուսակցական թիւ՝ ոչ կուսակցական, յեղափոխա- կան թիւ՝ հակայեղափոխական լուսա- տորչ կան թիւ՝ բողոքական բոլոր հա- մայնքներն ալ ձեռք ձեռքի տուած կատարեցին իրենց եղբայրական պարտականութիւնը : Եւ ի՞նչու պիտի չկատարէին չէ՞ որ մենք բոլորս ալ հայ եւ եղբայր ենք ու մեր բոլորին

սի անհանդարտ փոթորիկը մէզմելու գերագոյն ճիգով :

Ելաւ ոտքի, բայց կը տատանէր, նստեցաւ մահճակալի կողին, պահ մը հանգչեցաւ ու հազն ալ մի քիչ ի- ջած՝ նուէն կանգնեցաւ : Գտաւ թէյամանը . պատրաստեց թէյը, հը- րեց մէկ կողմ գրքերն ու թղթերը եւ տեղադրելով հոն գաւաթն ու շաքարամանը, եկաւ նստեցաւ մօտը : Բայց, ո՛հ, այդ ցուրտը այդ հո- վը . . . կը փչէր, կը սուլէր, կը ցնչ- ցէր սենեակը : Կը փչէր գրան ներ- քե ի ճեղքէն . . . կը փչէր փեղկերու ձեռպերէն . կը փչէր սպակիի բաց- ուած քնեթէն, կը փչէր ամէն կող- մէն—սպանական, անթթօրէն, ան- խղճօրէն . . .

Լեցուց գաւաթը եւ տարաւ շրթ- ներուն : Տաք հեղուկի հպումը պող շրթներուն՝ նոր սարսուռ մը ազդեց Գառի մը ումպով կուլ տուաւ թէյը եւ, գունջը ափին մէջ միաց մը- տածկոտ :

Հովը կը փչէր դուրսէն, անկա- րելիօրէն, անհանդարտօրէն :

Պահ մը միաց անշարժ, ապա շր- ջեց աչքերը չորս կողմ : Սենեկին մերկութիւնը, լալկան տպաւորու- թիւնը, եզերական պող ճնշումը անհանդուրժելի էր նօրէն ու նորէն նայեցաւ շուրջը :

Մոմին պլպլումները, դուրսէն

ցուր մէկ է միթէ բաւական չեղա՞ւ այսքան տարուան իրարու պէմ ունե- ցած որն ու հսկառակութիւնն իս, դեռ պէ՞տք էր շարունակել այդ վե- սակար ուղին : Ո՛չ, ժամանակն է որ իրար հասկնանք եւ կոնակ կոնակի ձեռք ձեռքի տուած միեւնք ազատա- գրական մարտը . փչրե՛նք բռնակա- լութեան լպիրշ չղթան ծածանեցնե- լու համար ապատութեան դրօշակը : Ինչպէս ըսի արդէն՝ հանգանակուած դրամներու գումարները եւ այն եր ու- զեա գործունէութիւնը որ երեւան եկաւ վերջին ամիսներուն մէջ, ապա- ցոյց են որ անցած են հին ժամա- նակները եւ Ամերիկահայ հասարա- կութեան մեծագոյն մասը եկած է այն գլխապնութեան թէ ինքը բա- րոյական պարտականութիւն մը ունի կատարելիք հանդէպ իր եղբորը եւ իր ազգին . այսինքն օգնելու եւ ձեռք կառկառելու անոր հոգ չէ ի՞նչ ուր եւ ինչ միջավայրի մէջ ալ ապրելու ըլ- լայ :

Պէտք է հոս աւելցնեմ որ հանգա- նակուած գումարները արդէն օրը օ- րին զրկուեցան ու կը զրկուին իրենց նպատակին :

Ուրիշ յուսատու եւ միանգամայն մխիթարական երեւոյթ մը որ կայ, այն՝ վերջերս ի նպատակ վասպուրա- կանի սովեթներուն բացուած հան- գանակութիւնն է . տեղ տեղ հանգա- նակութիւններ կատարուած են ար- դէն, եւ չա՛քեր կը լլան աւելի ընդհան- րացնելու, այս առթիւ պէտք է ըսեմ որ Ամերիկահայ մամուլին մէջ մասին ըրած արխունջ ջանքերու շնորհիւ էր որ այս հանգանակութիւնը սկսաւ :

Յուլիս 2-ին էր որ տեղուց Ազգ- որահի վարչութեան աջակցութեամբ Պոսթօնի հայ ուս. միութիւնը ներ- կայացուց անձա՛հ Բաֆֆիի ՈՒՆԹԻՆՈՒ աեղիս Ամերիկեան թատրոնին մէջ նոյն նպատակին համար, քաղաքէս եւ չրջականերէն երկսեռ խումը բազմու-

զազտագողի ներս թափանցող հովուն զէմ պար կը բռնէին պատերուն վը- բայ, այլանդակ ու արտառոց ուր- ուականներ առնելով, նայեցաւ կախուած պատկերներուն, դիտեց կան կարասին, գրքերը, եւ ի վեր- ջոյ հայեացքը գամուեցաւ անկողնին որուն վրայ այդ պահուն կար մի քանի հինգած բանթալօն ու վերաբ- կու մը : Չը կրցաւ երկար դիտել, ծածկեց երեսը ափերուն մէջ եւ սկը- սաւ հեկեկալ . . .

— Պէ՛, երկի՛նք . . . ո՛հ, Աստուած իմ . . .

Ճակատագրային ո՛պիսի դժխեմ գարձ . . .

Երկաթէ սիրտ եւ գերմարդկային հանգուրժանք հարկաւոր էր դիմադ- րելու յիշատակներու, — անցած, թաղուած, կորսուած, այլ միշտ ան- մասաց յիշատակներու, — այն հսկայ հոսանքին որոնք շարունակ կը խու- ժէին զժրաղէ Արսէնի վրայ . Ի՞նչ էր եւ ի՞նչ էր եղած, եւ դո՛ւ, երեք տարուան մը ընթացքին միայն . . . Ինչպիսի՛ հակադարձ, ինչպիսի՛ սեւ բաղդ, լնչպիսի՛ արիւնոտ ու սրտա- գալար իրականութիւն . . .

Չէ՛, մահը, նոյն իսկ մոռացօն- քի այդ զժպիտի աստուածը, կարող չէր այսպիսի ցաւատանջ պատկեր մը

թիւն մը փութացած էր ներկայ գրու- նութիւն օգնելու համար վասպուրականի սովեթներուն, որոնք այս պահուս բրդուճ մը չոր հացի կտորտը կը քա- չեն, և լսելու համար հայկական կեանքի դառն իրականութեան այս տխուր տրաման որ այնքան ձեռնհա- սօրէն գծած է Բաֆֆիի հանճարը, նաեւ, քաջալիկու Պոսթօնի հայ ուս. միութիւնը իր բրած այս մեծ զոհողութեան համար, շնայելով դե- րակատարներու մեծագոյն մասին սկսնակ մը ըլլալուն, ուրախ եմ ըսե- լու որ շատ յաջող կերպով կատարե- ցին իրենց դերերը :

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄԱՋԻ

ՍՕՅԻՍՅԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Թոռուցիկները բաց թողելէն եւ իմ թղթակցութիւնս «Շարժում»-ի մէջ հրատարակելէն ի վեր է որ դաշ- նակցականներէն ոմանք կատաղած են :

Եթէ խնդիրը պելի առարկայ ը- նելու ըլլանք, թերեւս խեղճերնին էլ ցնորեցնեն (հոգ չէ խնթանոց կայ) դաշնակցական ակէնտները գի- չերը ցերեկին խառնած ամեն ճիգ թափելով թոռուցիկն բաց թողնողները գտնելու միտումով զբաղած էին . վրայ հասաւ իմ թղթակցութիւնը . եւ մէկէն իմէկ կատողեցան . այս ան- գամ խնդիրը փոխել էր իր կերպա- բանքը . առաջ որ անխախտ կերպով հնչակեաններին կը վերագրէին Քը- ռուցիկը, այս անգամ վար- ղօյական փնտրելու տենչով վարակ- ւած էին ամբողջ տեղուց դաշնակցա- կանները . ժողով ժողովի ետեւից սարքւած էին իրենք իրենց վրայ կատակածելով մի գուցէ իրենց մէջ էլ վարդօյականներ չը լինեն ու այդ- պիսով զաղտնիքը իր ամէն գոյնով դուրս թափէր :


Ազգ. ընթերցարան անունը շա- հագործողներ նրանցից կին խեղճերը

մոռցնել տալ : Երեք տարի միայն— երեք դար հեռու անցեալի մը սե- ռու թեան մէջ թաղուած ժամանա- կամիչոց մը . — բայց եւ այնպէս, միշտ կենդանի . միշտ վառ, միշտ արթուն երեւակալութեան առաջ . չըջան մը՝ որ անեղծելի է . անջնջե- լի, անմոռանալի . . .

Երեք տարի՝ երեք դարու արցունքի եւ արիւնի գիծ մը—սակայն եւ այնպէս, անոյժ խաղաղութեան ապ- րուած կեանքի մը այն տրտմանոյ զրուադները՝ որոնք օղակաւոր շար- քով կուգան կը ծառանան այս ցուրտ, անպաճոճ, մահատիկ խցիկին մէջ իսկ, յամաս ու երկար տողանցումով :

Հետեւելու համար Արսէնի եղբրա- կան տոսմին քայլ սոք քայլ . պէտք է թափանցել սյղ երեք տարիներու հետեւ անցեալը, անգրագառնալ ու այն շուայտանքի, վայելքի ու զուար- թօնքի քօղաքը՝ ուր ինք եւս փու- թացած էր միեւնոյն վարդակարմիր յոյսերով, եւ որոնք, աւա՛ղ, տը- խուր ցաւերգութեան մը նախերգն ըլլալ սահմանուած էին :

(Շարունակելի)



կը կարծէին թէ միայն վարդոյս կանոններ թողակցութիւնը կը հրատարակէր «Շարժում» մենք այդ մասին կը ծափենք երեք դաշնակցական տղաները որ լաւ բռնած են իրենց վարժագետներու հրահանգը:

Այժմ ինչո՞րք երեւի վրայ ձգւած է. մենք մեր կողմէն կաւելցնենք կրկին այն խոշոր անկանները այդ ասիկար խմբակի ճակատին կը հրաւիրենք նաեւ որ փոխանակ հնչակեաններով եւ վարդոյականով զբաղելու զբաղին իրենց այն իսկ արհուրանով որ շին գրեթէ թէ կանկանն. աչքի առաջ բերէք ով պարուններ ձեր լարախաղացութիւնը եւ այդ տեղ դուք ինքնիշ պիտի հասնուիք որ ձեր արած ամէն զորքը քննադատութեան արժանի է. քննադատողը ըլլայ հնչակեան ըլլայ վարդոյական այդ ինչո՞րք մը չէ որ դուք հասկնալով կուզէք արդարացնել ձեզի. ոչ. այլ դուք պէտք է իկատի առնէք ձեր գործունէութեան ամէն մի կէտ, որ քննադատուելու տեղի չի տայ. ի դուր են ձեր ջանքերը. գործը ինքնին կուզայ հաստատուել թէ դուք խաբարանք էք:

Այլեւս ինչու խճճանքի տեղի տալ կուզէք ձեր ապկարութիւնը Ռազ միգրի իւր 71 մէջ պատկերացնելով. այդտեղ չէ որ դուք եւս կը հաստատէք ձեր լարախաղացութիւնը. ինչ կուզէք որ այդ երկու անկանները մեզ տալով Ձեզ արդար՝ ձեւացնէք հասարակութեան. մենք այդ անկանները ձեր ճակատին գրոյմել ենք եւ պիտի գրոյմենք էլ հիմնուելով այն փաստերի վրայ որ մենք ունիմք մեր ձեռքին մէջ. բաւական է պարուններ որչափ շահագործեցիք. Նիւթ չէք ամշնար գոնէ կարծեցէ՛ք. ջախջախիչ փաստեր շատ ունիմք, ձեր մասին. ուստի տեցէ՛ք. պայանծեցէ՛ք. ընդունեցէ՛ք մեր Ձեզ տուած անկանները:

ՔՆՆԱԴԱՏ

26 Յուլիս 1906
ՍՕՖԻԱ

Մեծայարգ խմբագիր
Գեորգիոս լրագրի
Ա. Կ. Կ.

Պուլկարահայ ուսուցիչներու համաժողովին որոշմամբ, յիշանա կուզայ ներկայիս խնդրել Ձեզմէ որ բարեհաճիք հրատարակել պուլկար ուսուցչական Գիտութեան կողմէ Ինչի եկած շնորհաւորական հեռագիրը, զոր թարգմանաբար կուզուի կենք Ձեզ:

Ի դիմաց պուլկար ուսուցչ. համաժողովին Գիտան
26 Յուլիս 1906
Վառնա

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Յանձին Ձեր կողմունքն պուլկ. ուսուցչ. Միութեան ապագայի գործակիցներ. Պուլկարի ընդհանուր կրթական գործին յառաջացման համար:

Նախագահ: Բլոկուաքօֆ
Ատենագրիչ: Միւնչէֆ
23 Յուլիս 1906
Սօֆիա

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՌՈՒՍՃՈՒԿԻ ԱՂՔ. ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՊԱՏ. ԱՆԿԱՍՈՅ

Խնդրեմ հրապարակուել ինձ ըսել թէ որո՞ւ կամ ի՞նչ տեսակ խաչագոյութիւնը բրած եմ ես. միթէ ճանապարհածախսի հայ թ. յիշման ծախք մը ամբողջօր տեսնու համար եղած խնդրանք մը խաչագոյութիւնը եղած կը լինի, եթէ դուք այդպէս ըմբռնած էք ու կ'ըմբռնէք թող ուրեմն ինձ թերցող հասարակութիւնը դատէ:

Խէ իմ բրածներուս խաչագոյութիւնը կըսեն ուրեմն պիտի ըսեմ թէ դուք այդ բառի նշանակութեան տեղեակ չըլլալով ինձ պէտք հայ երիտասարդի մը պատիւ արատաւորելու աշխատած էք, որը երբէք ներելի չէ՛ նա մանաւանդ Ձեզ պէտք պաշտօնական անձնաւորութեանց, այո, Ձեզ որ ընկերութեան մը վարիչն էք:

Գալով իմ 24 զոյգ գուլպա ունենալուս դատել յանգանք մը չէ՛, քանի որ ամէն անհատի հրածեցտ պէտքն է:

Իսկ ուստիկանութեան զիս ձեր բակալելը ու քննարկը դա բացարձակ զպարտութիւն մըն է քանի որ ես ի՛մ կամօքս հեռացած եմ Ռուսոնքէն:

Իսկ գալով իմ Եւրոպա երթալուս խնդրոյն չը կարողացայ ցորդ փասնզի չը կրցի պէտք եղած ճանապարհածախս ամբողջացնել և զգուշացայ ալ խնդրանքներու քանի որ եղած խնդրանքներ խաչագոյութեան կը փոխուին:

Ինձ առաջարկուած գործերու չընդունելուս պատճառը արդէն բացայայտ է. քանի որ Եւրոպա մեկնել էր փափաքս:

Ահա այս է խնդրոյ իրականութիւնը և դուք անտեղի յերևարանքներով ելած էք մրտտել զիս և դուք պատասխանիտ ուշանալուն ալ հիմնեցաք կարծելով թէ Ձեր ըսածները ճշդութիւններ են որուն ելքէք չպիտի կարողանայի պատասխանել Ձե՛, այդ պէտք չէ՛ և որովհետեւ գործով գիւղ գացած էի ու այսօր վերադարձայ ու հասկցայ իմ մասին եղած անտեղի գրպարտութիւնք անոր համար այսօր ալ կը պատասխանեմ:

Գրիգոր Մանուկեան
20 Յուլիս 1906
Սիւրիստէ

Հ Ր Ա Ի Է Ր

Աղք. ընկերութեան Գործ. ժողովս կը փութայ հրաւիրել յարգոյ անգամակիցները որ հաճին ներկայ գտնուել տեղի ունենալիք Ընդհ. ժողովին այս կիրակի (վաղը) 30 Յուլիս ժամ 2, յ'Սօֆ. վարժարանը. օ-

րակարգ ունենալով

1. — Համարատուութիւն Գործ ժողովոյ
— Ընտրութիւն նոր Գործ. ժողովոյ
Յուսովով որ պատուաբան անդամակիցը ներկայ պիտի գտնուին նոյն օրը իրենց իրաւունքը գործադրելու կը մնալը յարգանք
Գիտան Գործ. ժողովոյ
Ատենագրիչ Լեւոնապետ
Ա. Չարահանէլեան Ս Սամուէլեան
26 Յուլիս 1906
Վառնա (կնիք)

ՍՉԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուլկարիոյ հայ ուսուցչական համագումարին մէջ Թիւրքիէի մասնաւոր վարժարանի տնօրէն ՊՈՅՆԵՆ առաջարկեց ազգային զպրօններէն խալտա ջնջել կ'օրէքի գաստուութիւնը և կամ թէ միայն լըրե պատմութիւն աւանդել: Պիւնեանի առաջարկին հակառակեցան վարժուհիներ և ուսուցիչներ. մանաւանդ ընկերակարական Ս. Հինտիւան. Յի. լիպէի Կիւր յիւն վարժարանի ուսուցիչ. բացատրելով որ արդի հայ ընկերութիւնը և թէ պուլկար պետութեան օրէնքները չեն հանդուրժեք երոյրովին անապի է այդպիսի հարց մը մէջտեղ դնելը...

Այնպէս որ խոսով. խաչագոյութիւնը ու մտով հոգեհանգիստներ կատարող կուսակցութեան անկրօնք անգամին հակառակորդը կը հանդիսանաւ ընկերակարական մը... Ժողովրդի վրա ազդելու զայն խաբելու համար կարելի է ամեն յիմարութիւն ընել. վերջը լլալ առաջարկել որ զպրօնները մէջ կ'օրէք չը դասախօսուի:

Քանի մը օր է որ Վառնա կը գտնուի Թրոնիզի յայտնի քաջ Բարթոլոմէոս վարդապետը: Քանի մը երիտասարդներ մտածեցին հերոս վարդապետը մեծարել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վառնայի քաղաքապետութիւնը անցեալ օրուան միթին գին խիտ պահանջին համեմատ արդէն ստորագրած է յոյն պաշտօնեաներուն արձակման հրամանագիրը:

Փիլիպէի մէջ պատրաստութիւն կը տեսնուի Պուլկարիոյ բոլոր քաղաքներէն եկող պատգամաւորները, որոնք համազգային միթինք մը պիտի սարքեն հակառակ յոյներու, ընդունելու համար:

Ներքին գործոց նախարար պ. Բեթթօլ Սօֆիա վերադարձած է:

Սօֆիայի մէջ տեղի ունեցած միթինքը որոշումով մը պուլկար կառավարութեան պա-

հանջեր է գիտանալիտու կան յարաբերութիւնները խզել Յուսուտանի հետ...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանի երկվամուսնիին հիւանդութիւնը ուրէ՛մայի վերածուած է. սակայն ծանր տեսակէն չէ և Սուլթանի առողջութիւնը չէ քայքայուած:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ինձ թրսպուրկէն Լօւտօնի Կիւրի պուլկարութիւնը կը հաղորդեն թէ գործաթոյ ընդդէմու ի. Կիւրի տէն հրահանգած է զարգացնել գործաթոյը և սպասել աւելի յարմար ժամանակի. ներկայ գործաթոյին արդիւնքը միայն բազմութիւն ձերբակալութիւններ են. ձերբակալուածներուն մէջ կան նաև Տուժայի նախկին անգամներ:

Արտաքին գործոց նախարար Իլվօլքիին հրամարման լուրը անհիմն է:

Տուժայի անգամներուն կողմ տասնեակ հազարներով կը ցըրուուի ժողովրդին մէջ. ցրուողները կը ձերբակալուին:

Շուշիի մէջ խաչագոյութիւնը վերահաստատուել է. հայերն ու թաթարները կրկին հաշտուած են:

Ռուսական արժէթղթերուն գինը Պէրլինի մէջ սկսեց է բարձրանալ...

Ինձ թրսպուրկի թերթերու հաղորդածին համեմատ զինուորական գատախաղ ժէնէրալ Բալլօ, որուն տուժան միշտ հակակիր ցոյցեր կընէր իր հրամարականը տուած է:

Սթօլքիին յաջողած չէ նախարարութիւնը վերանորոգել չափաւոր ազատական տարրով. կը կարծուի որ նորէն վիթէն պիտի կանչուի նախարարապետի պաշտօնին:

Տուժաի ընկերակարական անգամները ցամաքային և ծովային զօրքերուն կողմը ուղղած են. մատնանշելով որ կառավարութիւնը գերման և աստրիացի զօրքեր կը հրաւիրէ ապստամբական շարժումները խզելու: Այդ կողմը զինուորականութեան հրաւեր կը կարգացուի միայն ժողովրդին հայրենիքը պաշտպանելու համար...